ԻԲՆ ԽՈՐԴԱԴԲԵՀ (820–912)

Արու լ–Կասիմ Ուբայդուլլահ իբն Արդալլահը, որը ծանոթ է Իբն Խորդադբեհ (կամ Իբն Խուրդադբեհ) անունով, պատկանում էր մահմեդականություն ընդունած մի պարսիկ ընտանիքի: Սկզբնապես նա զբաղաշտական էր, ապա ընդունել էր իսլամը: Նրա հայրը՝ Մամուն խալիֆայի օրոք եղել էր Թարարիստանի կառավարիչը: Ինքը՝ Իբն Խորդադբեհը հավանաբար ծնվել է Խորասանում: Ենթադրվում է, որ նա ծնվել է 820–825 –ի միջև:

Նա դարձել էր Ջիբալ նահանգի փոստի պետը, ապա Բաղդադի, կամ Սամառայի փոստի ծառայության ընդհանուր տնօրենը: Նույն ժամանակ Իբն Խորդադբեհը հեղինակել էր մի շարք աշխատություններ նվիրված երաժշտությանը, դրականությանն ու պատմությանը: Շնորհիվ այն բարձր դիրքի, որ ուներ Իբն Խորդադբեհը ալ–Մուտամիդ խալիֆայի (870–892) մոտ, նա հնարավորություն ստացավ օգտվելու արխիվներից, որոնք էլ նրան առատ նյութ տվեցին ստեղծելու իր աշխարհագրական նշանավոր երկը՝ «Գիրք ճանապարհների ու թագավորությունների մասին» (Քիտաբ ալ–Մասալիք ուա ալ–Մամալիք), որը նա ձեռնարկեց 846–ին ու շարունակեց հավանաբար մինչև 885–ը:

Իբն Խորդադբեհը ապրեց շատ երկար ու մահացավ հավանաբար 912 թվականին: Հետագա աշխարհագրագետները ոչ միայն օգտվեցին նրա աշխատությունից, այլև նրա օրինակով, իրենց երկերն անվանեցին նույն ձևով՝ «Քիտաբ ալ–Մասալիք ուա ալ–Մամալիք»:

Նրա աշխատությունը բաժանվում է յոթ մասի: Առաջինը պարունակում է տիեզերագիտական տեսություններ ամենայն հավանականությամբ քաղված Պտղոմեոսից, երկրորդը՝ ներկայացնում է Հարավային Միջագետքը, կամ Սավադը, որպես աշխարհի կենտրոն, երրորդ, չորրորդ, հինգերորդ ու վեցերորդ մասերում հաջորդաբար ներկայացվում են երթուղիները դեպի Արևելք (Պարսկաստան, Հնդկաստան և Չինաստան), Արևմուտք (Ասորիք, Եգիպտոս, Մաղրիբ, Վերին Միջագետք, Բյուզանդիա), Հյուսիս (Հայաստան, Կասպիականի ավազան) և Արաբիա: Վերջապես յոթերորդ բաժնում խոսվում է աշխարհի բաժանումների ու հրաչքների մասին, որը տարբերվում է նախորդ մասերից և բացառված չէ, որ հետո է ավելացվել:

Իբն Խորդադբեհի երկի լեզուն չոր է, այն գրված է ոչ թե լայն հասարակության, այլ որոշակի նեղ շրջանակի համար:

Ներկա թարգմանությունը կատարված է հետևյալ հրատարակությունից. Bibliotheca Geographorum Arabicorum, edidit M. J. de Goeje, VI, Lugduni Batavorum, 1967

(Крачковский, IV, стр. 147-150, R. Blachère et H. Darmaun, Extraits des Principaux Géographes Arabes du Moyen Âge, Paris, 1957, p. 21-22, Ibn Khurradadhbih, M. Hadj – Sadok, EOI, CD-ROM, (III; 839a)).

Տե՛ս նաև.

- Ibn Khordadbeh, Kitab ul-masalik u al-mamalik, Leiden, 1306 (1928)

- Barbier de Meynard C., Le Livre des routes et des provinces, par Ibn-Khordadbeh, publié, traduit et annoté par C. Barbier de Meynard. JA, 6 serie, V, 1865, p. 5-127.